ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 9

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

25 .04. 2024 թ. *ք. Իջևան*

Առցանց կազմակերպած նիստին մասնակցում են գիտական խորհրդի նախագահ Ա. Մարգարյանը, քարտուղար Ա. Ալեքսանյանը, Գ. Սիրոյանը, Գ.Հովհաննիսյանը, Թ. Վարդանյանը, Ա.Պոտոսյանը, Ա. Մուրադյանը, Ա.Սարիբեկյանը, Ա. Ուլիխանյանը, Պ. Ասլիբեկյանը, Գ. Ավետիսյանը, Դ. Աֆյանը, ֆակուլտետի ՈՒԽ-ի նախագահ Թ. Ջանվելյանը, ՈՒԳ նախագահ Ս. Վարդապետյանը, Հ. Սանթրոսյանը, Զ. Հարությունյանը:

Նիստի օրակարգը ներկայացրեց Ա. Մարգարյանը

Օրակարգ

1. *Ֆակուլտետի ավարտական աշխատանքների նախապաշտպանության արդյուքների ամփոփման մասին(զեկ. Գ. Սիրոյան, Գ. Հովհաննիսյան):*
2. *Երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքերի ամփոփման մասին(զեկ. Ա. Մարգարյան):*
3. *Երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների մասին(զեկ. Ա. Մարգարյան):*
4. *Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմի հաստատման մասին(զեկ. Ա. Մարգարյան)*
5. *Ընթացիկ հարցեր.*
   - *5.1. ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին կից կառույցների հետ համագործակցությունը ապահովող մշտական հանձնաժողովի աշխատանքներին մասանկացելու համար թեկնածուների առաջադրման մասին (զեկ. Ա. Մարգարյան):*

1. Լսեցին. - Ֆակուլտետի ավարտական աշխատանքների նախապաշտպանության արդյուքների ամփոփման մասին(զեկ. Գ. Սիրոյան, Գ. Հովհաննիսյան):
Լսեցին- Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ Գ. Սիրոյանին:

Գ. Սիրոյանը ներկայացրեց ավարտական աշխատանքների նախապաշտպանության արդյունքները: Նա նշեց, որ ուսանողի կողմից բակալավրի ծրագրի ելքային կրթական արդյունքներին համապատասխան մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը հաստատվում է ավարտական աշխատանքի կատարումով և պաշտպանությամբ: Այդ պատճառով կարևորվում է ավարտական աշխատանքների նախապաշտպանության պատշաճ կազմակերպումը և անցկացումը: Գ. Սիրոյանը նշեց, որ ապրիլի 20-ին անց է կացվել ավարտական աշխատանքների նախապաշտպանություն, որին մասնակցել է ԵՊՀ ԻՄ-ի փոխտնօրեն Մ. Օթարյանը:

Ավարտական աշխատանքների ղեկավարները, համաձայն հաստատված գրաֆիկի, կատարել են խորհրդատվություններ, և այս պահի դրությամբ ուսանողների մեծ մասի աշխատանքները ընթանում են ժամանակացույցին համապատասխան: ԿԾղեկավարը նշեց, որ համաձայն մասնաճյուղի կողմից սահմանված կարգի՝ ավարտական աշխատանքները ղեկավարի գրավոր կարծիքի առկայությամբ ենթակա են գրախոսման: Ամբիոնը հաստատել է գրախոսների ցուցակը: Գրախոսությունները պատրաստ պետք է լինեն պաշտպանությունից առնվազն 5 օր առաջ:

Գ. Սիրոյանը նշեց, որ նախապաշտպանությունն արդյունավետ էր: Ուսանողներին արված դիտողությունների վերացման դեպքում պաշտպանությունը կլինի դյուրին:

Լսեցին.-Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչ Գ. Հովհաննիսյանին:

Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչ Գ. Հովհաննիսյանը ներկայացրեց, որ «Զբոսաշրջություն» մասնագիտության ավարտական աշխատանքների նախապաշտպանությունը իրականացվել է համապատասխան գործող ժամանակացույցի (ապրիլի 19-ին): Նախապաշտպանությանը մասնակցել են ֆակուլտետի տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչը, կրթական ծրագրի պատասխանատուն և ավարտական աշխատանքների ղեկավարները: Այս ձևաչափը հնարավորություն է տալիս տեղում շտկել և լուծում տալ նկատվող թերություններին և խնդիրներին: Անհատական վերաբերմունք ցուցաբերելով յուրաքանչյուրին՝ վեր հանվեցին ավարտական աշխատանքներում առկա թերությունները և տրվեց մասնագիտական խորհրդատվություն դրանց վերացման ուղղությանբ: նշեց, որ համաձայն մասնաճյուղի կողմից սահմանված կարգի ավարտական աշխատանքները, ղեկավարի գրավոր կարծիքի առկայությամբ ենթակա են գրախոսման: Ամբիոնը հաստատել է գրախոսների ցուցակը: Գրախոսությունները պատրաստ պետք է լինեն պաշտպանությունից առնվազն 5 օր առաջ:

Արտահայտվեցին. - Ա. Պոտոսյանը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24. 2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին. -Ֆակուլտետի առկա ուսուցման համակարգի ավարտական աշխատանքների նախապաշտպանության արդյունքները ընդունել ի գիտություն:

2. Լսեցին. - Երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքերի ամփոփման մասին(զեկ. Ա. Մարգարյան):

Ա. Մարգարյանը ներկայացրեց երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքները: Ֆինանսներ երկրորդ կուրսի մասնակցած ուսանողների 88% ստացել դրական միավոր, իսկ Ֆինանսներ III՝ 47%: Զբոսաշրջություն ԿԾ II կուրսի մասնակցած ուսանողներ դրական միավոր են ստացել 85%, իսկ III կուրսի՝ 75%:

Որոշեցին- Հաղորդումն երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքերի ամփոփման մասին ընդունել ի գիտություն:

3. ***Լսեցին. - Հաղորդում 2-րդ կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների մասին (զեկ. Ա. Մարգարյան):***

Դեկանի պաշտոնակատարը հաղորդեց, որ 2-րդ կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունները և ստուգումները (I-III կուրսեր) համաձայն գործող ժամանակացույցի պետք է իրականացվեն ս.թ մայիսի 29-ից հունիսի 4-ը ընկած ժամանակահատվածում: Նույն ժամանակահատվածում կազմակերպվելու են նաև ստուգարքները: Ամբիոնները նախապես հստակեցրել են ընթացիկ քննությունների և ստուգումների իրականացման ձևերը և սահմանված ժամկետներում պահանջել տոմսերը, թեստերի նմուշները: Ժամանակացուցերը կազմվել են դասախոսների և ուսանողների հետ համատեղ քննարկումների եղանակով, որոնք ներկայացվել են ՈՒՄՎ հաստատման: Այնուհետև դրանք տրամադրվել են ուսանողներին, դասախոսներին և մասնաճյուղի կայքին:

Արտահայտվեց. - Գ. Հովհաննիսյանը

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24. 2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին. - II կիսամյակի II ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

4. ***Լսեցին. - Հաղորդում ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմի անդամների առաջադրման մասին(զեկ. Ա. Մարգարյան):***

*Ա. Մարգարյանը հաղորդեց, որ ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգով» / **2017 թվականի նոյեմբերի 7-ի N 1282-Ն հրաման**/՝ տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի հաստատմանն ենք ներկայացնում 2023-2024 ուստարվա «Ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» մասնագիտությունների ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմերը:*

Դեկանի պաշտոնակատարը նշեց, որ ըստ վերոնշյալ կարգի՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվում են տվյալ ոլորտի գործատուներ և ակադեմիական հաստատությունների ներկայացուցիչներ, համապատասխան ֆակուլտետի դեկանը, ամբիոնի վարիչները, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստերն արձանագրում է քարտուղարը, ով տվյալ հաստատության աշխատակից է և հանձնաժողովի անդամ չէ: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմի առնվազն 50%-ը պետք է լինեն ոչ տվյալ հաստատության աշխատակիցներ:

«Ֆինանսներ (ըստ ոլորտի)»

1. Մինասյան Գևորգ Էդիկի	*- նախագահ, ՀՀ ԿԲ Տնտեսական հետազոտությունների վարչության հատուկ հետազոտությունների բաժնի պետ, տ.գ.թ., ասիստենտ,*
2. Սիրոյան Գարիկ Աշոտի	*- Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, «Ֆինանսներ (ըստ լորտի)» ԿԾՂ, դոցենտ, տ.գ.թ.,*
3. Մուրադյան Արթուր Կարենի	*- Ընդհանուր տնտեսագի-տության ամբիոնի ասիստենտ, տ.գ.թ.,*
4. Շիրխանյան Ալեքսանդր Ալբերտի	*- Ընդհանուր տնտեսագի-տության ամբիոնի ասիստենտ, տ.գ.թ.,*
5. Ղուշչյան Նարեկ Աղասու	*- ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ,*
6. Էդիլյան Արման Գագիկի	*- ՀՀ ՊԵԿ ՀՎԸՀ հարկային տեսչության վարչության թիվ 13 տարածքային բաժնի պետի տեղակալ, պետի ժ/պ,*

«Զբոսաշրջություն»

1. Մանասյան Գոռ Սուքիասի	*- նախագահ, «Եվրոպական համալսարան» հիմնադրամի*

	Զբոսաշրջության ֆակուլտե-տի դեկան, դոցենտ, աշխ.գ.թ.,
2. Հովհաննիսյան Գուրգեն Ժորժիկի	*- Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի պաշտոնա-կատար, պրոֆեսոր, աշխ.գ.թ.,*
3. Վարդանյան Թրահել Գերասիմի	*- Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի պրոֆեսոր, աշխ.գ.դ., «Զբոսաշրջություն» ԿԾՂ,*
4. Պոտոսյան Ակսել Հարությունի	*- Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի պրոֆեսոր, աշխ.գ.թ.,*
5. Խաչիկյան Սոս Վիրաբի	*- ՀՊՏՀ Մակրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչ, դոցենտ, տ.գ.թ.,*

6. *Ղևոնդյան Սոնա Երեմոյի - «Յելլ Էքսթրիմ Պարկ» ՍՊԸ-ի տնօրեն:*

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգով» / ***2017 թվականի նոյեմբերի 7-ի N 1282-Ն հրաման/՝*** *տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.*

Որոշեցին.- Հաստատել 2023-2024 ուստարվա Տնտեսագիտության ֆակուլտետի «Ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» կրթական ծրագրերի ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմերը և ներկայացնել տնօրենի հաստատմանը:

5. Ընթացիկ հարցեր.

5.1. Լսեցին. ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին կից կառույցների հետ համագործակցությունը ապահովող մշտական հանձնաժողովի աշխատանքներին մասանկացելու համար թեկնածուների առաջադրման մասին (զեկ. Ա. Մարգարյան):

Ա. Մարգարյանը հաղորդեց, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանի կողմից 2024 թ. ապրիլի 19-ին իջեցված շրջաբերականի համաձայն՝ անհրաժեշտ էր մինչև ս.թ. մայիսի 4-ը ներկայացնել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին կից Կառույցների հետ համագործակցությունն ապահովող մշտական հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու համար ֆակուլտետի կողմից ընտրված 2 ներկայացուցիչ (1-ը՝ վարչական կազմից, 1-ը՝ պրոֆեսորադասախոսական):

Ա. Մարգարյանն առաջարկեց թեկնածուներ և Գիտական խորհրդի միաձայն թվեարկությամբ, որոշեց առաջադրել Անուշ Սարիբեկյանի և Սվետա Սաֆարյանի թեկնածությունները:

Որոշեցին. - ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին կից կառույցների հետ համագործակցությունը ապահովող մշտական հանձնաժողովի աշխատանքներին մասանկացելու համար առաջադրել Անուշ Սարիբեկյանի և Սվետա Սաֆարյանի թեկնածությունները:

5.2 Լսեցին. -«Դասավանդման գերազանցության մրցանակ» 2023-2024 ուստարվա մրցույթին մասնակցության դիմում-հայտ ներկայացնելու մասին: (զեկ. Ա. Մարգարյան):

Ա. Մարգարյանը հաղորդեց, որ «Դասավանդման գերազանցության մրցանակ» 2023-2024 ուստարվա մրցույթին մասնակցության դիմում-հայտ է ներկայացրել ա.գ.թ., պրոֆեսոր Գուրգեն Հովհաննիսյանը:

Դիմում –հայտը նախապես ներկայացվել և քննարկվել է «Տնտեսագիտություն» մասնագիտությունների անվանակարգում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի Տնտեսագիտության ֆակուլտետի «Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի կազմակերպման և անցկացման հանձնաժողովի կայացած նիստին:

Որոշեցին. - Հավանություն տալ «Դասավանդման գերազանցության մրցանակ» 2023-2024 ուստարվա մրցույթին ա. գ. թ, պրոֆեսոր Գ. Հովհաննիսյանի մասնակցության դիմում-հայտ ներկայացնելուն:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ա. Մարգարյան
Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան